ապացուցում նաև նրա ընդօրինակած ձեռագրերը։ Կուբիի վանքի գրիչներից հայտնի են նաև Հովսեփ կրոնավորը (XV դար), Հակոբ գրիչը, Դանիել գրիչ Կուբեցին XV դար) և ուրիշներ։

Վայոց ձորի Խաչիկ գյուղի մոտ վիմագրական մի արձանագրություն վկայում է «Կուբեցի ուստայ Յովհաննէս նկարաբար»[29]։ Ըստ երևույթին Հովհաննես նկարաքարը քանդակագործական աշխատանքներ է կատարել նաև հայրենի գյուղում։ Վերջին գրավոր տեղեկությունները Կուբիի վանքի մասին վկայում են, որ, կուբեցի Մարգսի որդի Առաքել վարդապետը 1735 թ. մի խաչ է նվիրում իր հայրենի գյուղի վանքին[30]։

Պատմական Կուբի գյուղի հայկական աղգաբնակչությունը մոտավորապես 1755—1760 թթ. գաղթել է այդտեղից և բնակություն հաստատել Վրաստանի նախկին Կումիսու գավառի Ծինծղարո գյուղում, որտեղից հետագայում տեղափոխվել են Թբիլիսի։

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

ՈՒՇ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՅԳԵՇԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ

1971 թ. էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղից հյուսիս գտնվող բլուրների քարքարոտ լանջերը մշակովի դարձնելու նպատակով կատարված աշխատանքների ժամանակ հայտնաբերվել էին խեցանոթների բեկորներ։ Մեր կողմից տեղանքի մանրակնին հետազոտությամբ պարզվեց, որ նոր յուրացվող հողատարածությունն իր մեջ է առնելու այդտեղ գտնվող նախնադարյան դամբարանադաշտի մի հատվածը[1]։ Ոչնչացման ենթակա հուշարձանները հետազոտելու, նրանց ժամանակագրական պատկանելությունը որոշելու նպատակով, 1971 թ. օգոստոս ամսին էջմիածնի գավառագիտական թանգարանի միջոցներով ուսումնասիրության ենթարկվեցին յուրացվող տարածքի վրա գտնվող շուրջ 20 դամբարաններ, որոնք պատկանում էին Հայաստանի նախնադարյան մշակույթի ամենատարբեր փուլերին (մ. թ. ա. III—I հազ.)։ Հետազոտությունների ընթացքում հայտնաբերվեցին նաև Հայաստանի ուշ հելլենիստական դարաշրջանի թաղումներ, որոնք էլ նյութ են դարձել ներկա հետազոտության։

№ 1 դամբարան.—Գտնվում էր Այգեշատի այգիների մոտ, գյուղի այժմյան գերեզմանոցից 800—900 մ հյուսիս-արևմուտք, քարքարոտ բլուրներից մեկի հարավային լանջին։ Ռետնի մակերեսին այն ներկայանում էր որպես սովորական կրոմլեխ, որի շրջանաձև եզրագիծը սահմանագծվում էր միջին մեծության, իրար մոտ շարված որձաքարերով (տրամագիծը՝ 7 մ)։

Կրոմլեխի մակերեսին լցված էին մանր քարեր, որոնցով կազմված թմբի բարձրությունը շրջանագծի կենտրոնական մասում 40—50 սմ էր (նկ. I, 1, 2)։ Կրոմլեխի կենտրոնում, քարակույտի տակ հայտնաբերվեցին դամբարանի երեսը ծածկող երեք սալ քարեր (1,2×0,5×0,2 չափերի), որոնք դրված էին իրար շատ մոտ, արևելք-արևմուտք ուղղությամբ։ Ծածկի քարերի արանքները լցված էին մանր քարաբեկորներ, ըստ երևույթին եղել է նաև հող, որը հողմնահարության հետևանքով մաքրվել էր։ Սալ քարերը ծածկում էին փոքրիկ դամբարանը, որի երեք պատերը կառուցված էին կողքի վրա դրված մեծ քարերից, իսկ մեկը՝ հյուսիսայինը, մանր քարերից։ Ուղղանկյուն ձև ունեցող դամբարանը հյուսիս-հարավ առանցքով ուներ 1,4 մ երկարություն, 0,9 մ լայնություն և 0,8 մ խորություն։ Հատակը շարված էր մանր քարերով, որոնք ամրացված էին կավաշաղախով (նկ. I, 3)։

Դամբարանի ներսում՝ հարավ-արևելյան անկյունում հայտնաբերվեցին երկաթից պատրաստված եռաթև նետասլաքներ, գոտու քառանկյունաձև ճարմանդ, արծաթե հայելու բեկորներ, կարմիր քարով ոսկե օղ և սափորիկի բեկորներ։ Ննջեցյալի գանգի շատ վատ պահպանված մնացորդներ հայտնաբերվեցին դամբարանի հյուսիսային հատվածում։ Կմախքի մնացած բեկորները, որոնք նույնպես շատ վատ էին պահպանվել, հնարավորություն չընձեռեցին որոշելու ննջեցյալի թաղման սկզբնական դիրքը։ Ելնելով դամբարանի չափերից և ոսկորների սփռվածությունից, կարելի է ասել, որ ննջեցյալը թաղվել է հավանաբար ոտքերը կծկած վիճակում։

№ 2 դամբարան.— Գտնվում է առաջինից 30 մ արևմուտք։ Իր արտաքին նշաններով և դամբարանի կառուցման ձևով հար և նման է

29 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ս. Բարխուդարյան, էջ 183։

1 Այգեշատ գյուղի մոտ գտնվող նախնադարյան հուշարձանների առաջին նկարագրությունը տվել են ճարտարապետ Թ. Թորամանյանը և Մ. Վ. Նիկոլսկին։

30 Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 182—183։

առաջինին։ Գետնի մակերեսին երևացող, որձաքարերով շարված քառանկյունի դամբարանափոսի հատակին հայտնաբերվեց փայլեցված մակերես ունեցող թասի շուրթի բեկոր։ Դամբարանում այլ առարկաներ կամ ոսկորներ չգտնվեցին. թվում է, որ այն նախապես բացված, կողոպտված է եղել։



Նկար 1

№ 3 դամբարան.—Տեղավորված էր № 1 դամբարանից 45—50 մ հյուսիս-արևելք, շրջակայքի վրա գերիշխող մի բարձունքի գագաթին։ Սա ևս միջին մեծության քարերով շարված 13 մ տրամագիծ ունեցող կրոմլեխ էր, որի տափարակ մակերեսին երևում էր նույնպիսի քարերով շարված շրջանաձև դամբարանը։ Թաղման նպատակով կառուցված տարածությունը շրջանաձև էր և անսովոր մեծ (տրամագիծը՝ 3,7 մ)։ Դամբարանը լցված էր մանր և միջին մեծության տձև քարերով և հողով։ Վերջիններս հեռացնելուց հետո պարզվեց, որ շուրջ 80 սմ խորության վրա գտնվող հատակը պատրաստված է մանր քարերից ու կավածեփից, որի վրա պահպանվել էին խսիրի դաջվածքի հետքեր։

Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրությունները, այստեղ, միևնույն դամբարանում, թաղումներ կատարվել են տարբեր ժամանակներում։ Առաջինը կատարվել է միջին բրոնզի դարաշրջանում, որի համար էլ պատրաստված է եղել դամբարան-կրոմլեխը, իսկ երկրորդը ուշ հելլենիստական դարաշրջանում։ Որ իրոք դամբարան-կրոմլեխը կառուցվել է միջին բրոնզի դարաշրջանում (մ. թ. ա. XVIII—XVII դդ.), հաստատվում է դամբարանի ներսում հայտնաբերված, կետերով ու կտրած գծերով զարդարված կավամաններով, որոնք իրենց ուղղակի համադրություններն ունեն Հայաստանի այլ հնավայրերի համաժամանակյա նյութերի մեջ, ինչպես նաև դամբարանի կառուցման ձևով։ Այսպես, Այգեշատի դամբարանադաշտում մեր

կողմից պեղված № 7 դամբարանն ուներ ճիշտ նույնպիսի կառուցվածք, ինչպես № 3-ը, և բացի այդ, № 7 դամբարանում սև կետազարդ խեցեղենի հետ հայտնաբերվել էր կարմիր հիմնագույնի վրա սև ներկով նկարված զարդանախշերով գունազարդ խեցեղեն։ Ուստի համոզեցուցիչ է թվում, որ, իրոք, շրջանաձև դամբարան-կրոմլեխը կառուցվել է միջին բրոնզի շրջանում։

Բացի միջին բրոնզեդարյան նյութերից, որոնք տեղավորված էին դամբարանի կենտրոնում, հայտնաբերվեցին նաև երկրորդ թաղման հետ դրված մի քանի խեցանոթների բեկորներ, Տիգրան II-ի արծաթե դրամը և մեկ, նույնպես արծաթից պատրաստված քորոց։ Նախկին դամբարանի նմանությամբ այստեղ ևս ոսկորները շատ վատ էին պահպանված։

Ինչպես տեսնում ենք, վերը նկարագրված դամբարաններից ամենից հարուստը № 1-ն է։ Այստեղ հայտնաբերվել են ցածում թեք կտրած ծայրեր ունեցող եռաթև, բարակ պոչիկով երկաթից պատրաստված նետասլաքներ (նկ. II, 6)։ Հորինվածքի այս ձև ունեցող նետասլաքներ Հայաստանում հայտնի են հելլենիստական

ժամանակաշրջանի հնավայրերից, որտեղ այս տիպի նետասլաքների հետ հայտնաբերվել են նաև Տիգրան II-ի՝ ստույգ թվագրվող արծաթե դրամները[2] ու բնորոշ խեցեղեն առարկաներ[3]։ Նույնանման նետասլաքներ հանդիպում են նաև Առաջավոր Ասիայի և հյուսիսային Կովկասի անտիկ ժամանակաշրջանի հնավայրերում[4]։

Այս նույն դամբարանից գտնված գոտու բրոնզե ճարմանդը, երկաթե լեզվակով (նկ. II, 9), իր ուղղակի համադրությունն ունի Գառնիի շրջանի թաղումների ամենատարածված առարկաներից են, որոնք պատրաստված են եղել կամ բրոնզից, կամ արծաթից, կամ այլ համաձուլվածքից։ Հայաստանում հայելիները հայտնի են Գառնիի ուշ հելլենիստական և մ. թ. առաջին դարերի թաղումներից[5]։

Վերը նկարագրված առարկաների հետ մեկտեղ ուշագրավ է ոսկե ականջօղը (3,78 գրամ), որը անկանոն ձև ունի։ Նրա կենտրոնական մասը լայնացող է, իսկ ծայրերը, որոնք



ՆԿԱՐ II

մ. թ. ա. I դարով թվագրվող դամբարաններից գտնված մետաղե իրերի մեջ։ Հատկանշական են նաև արծաթե հայելին և ոսկե օղը։ Արծաթե հայելին պահպանվել էր երկու բեկորներով, ունի քիչ գոգավոր մակերես, որը հաստանում է եզրակծի մոտ (նկ. II, 3)։ Հայտնի է, որ հայելիները Հունաստանի, Առաջավոր Ասիայի և մերձսևծովյան երկրների անտիկ ժամանակա-

իրար չեն միանում, աստիճանաբար բարակող։ Արտաքին մակերեսը զարդարված է փոքրիկ գնդաձև ելունդավոր գծերով։ Օղակի մակերեսի մի ծայրը ավարտվում է ոսկե խոռոչում ընդելուզված ձվածիր կարմիր քարով, իսկ մյուսը մակերեսից բարձրացող, եռաթև ելուստով, որը նույնպես զարդարված է ելունդավոր հատիկներով (նկ. II, 8)։

Հատիկավոր զարդարանք ունեցող ոսկե առարկաները լայն տարածում ունեն Հայաստանի և Անդրկովկասի մ. թ. ա. I հազարամյակով թվագրվող նյութերում[6], մասնավորապես նրանք

---

2 Б. Н. Аракелян, Основные результаты раскопок древнего Арташата в 1970—1973 годах, *«Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 57։*

3 Г. А. Тирацян, Древнеармянская керамика из раскопок Армавира, *«Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 226, աղ. IV, 2։*

4 *Նույն տեղում, էջ 226։*

5 *Բ. Ն. Առաքելյան, Գառնի II, Երևան, 1957, էջ 80, նկ. 52։*

6 *Ս. Դևեջյան, Լոռի բերդի № 2 դամբարանի ոսկե և արծաթե զարդերը, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1։*

համադրվում են Ադրբեջանի մ. թ. ա. II—I և մ. թ. I—III դարերով թվագրվող հնավայրերում հայտնաբերված ոսկե ականջօղերի հետ, որոնք զարդարված են ինչպես հատիկավոր զարդով, այնպես էլ նույնանման ելուստով[7]։

Ուշ հելլենիստական դարաշրջանին պատկանող հնագիտական նյութերի շարքում առանձնապես արժեքավոր է Տիգրան II-ի արծաթե դրամը՝ հայտնաբերված № 3 դամբարանում (նկ. 3)։

Դրամի առաջին երեսին կետավոր շրջանակի մեջ պատկերված է Տիգրան II-ի կիսադեմը, հայկական թագը գլխին, դեմքով դեպի աջ. երկրորդ երեսի կենտրոնում քաղաքի դիցուհին է գահավորակին նստած։ Դիցուհու ոտքերի տակ ջրի աստվածությունն է՝ լողացող մարդու մերկամարմին կերպարանքով։

Դրամի երկրորդ երեսին աջից արձանագրված է βασιλεος, ձախից՝ երկու տողով՝ βασιλεου II Τιγρανου։ Մենագիրը՝ վերևում ΕΛ, ներքևում՝ C։ Դրամը կտրված է Տիգրանակերտում 76 թ.։

Նույն դամբարանում հայտնաբերվեց նաև արծաթե քորոց, որի մի ծայրն ավարտվում է գլխիկով, իսկ նրանից ցած առկա է միջանցիկ անցք (նկ. II, 7)։ Նման քորոցներ հայտնի են Թրիալեթիի աբեմենյան դարաշրջանի դամբարաններում։

Թաղումներից հայտնաբերված նյութերի բաղկացուցիչ մասն են կազմում խեցեղեն առարկաները, որոնք երեք տեսակի են. ա) փոքրիկ մի կանթանի սափոր, բ) հասարակ լայնաբերան կճուճներ, գ) թասեր։ № 1 դամբարանից հայտնաբերվածը լայնացող շուրթով, բարձր վզով, ուռուցիկ իրանով, փոքրիկ հարթ հատակով մի կանթանի սափոր է, որն ունի դարչնա-մոխրագույն երանգներով պատված մակերես (նկ. II, 5)։ Հայաստանում այս ձևի սափորներ հայտնի են դեռևս աքեմենյան դարաշրջանով թվագրվող Ութարբեկյանի[8], Ջրառատի դամբարաններից։ Ավելի ուշ նրանք ի հայտ են գալիս Արմավիրում[9]։ Կճուճներից մեկը (նկ. II, 1) ունի ուռուցիկ իրան, ոչ բարձր, կտրած շուրթ։ Արտաքին կարմիր մակերեսը պատված է մրի լաքաներով։



Նկար 3

Մյուսը (նկ. II, 3) փքուն իրանով, ցածր ուղղահայաց շուրթով լայնաբերան կավաման է, որի իրանի արտաքին դարչնագույն մակերեսը հղկված է քարե կոկիչով (նկ. II, 2)։ Կճուճները իրենց ձևերով, մակերեսների մշակման հնարանքներով համադրվում են Գառնիից, Արմավիրից հայտնի, այսպես կոչված, «խոհանոցային տեսակի» խեցանոթների հետ։

Թասերը ներկայացված են երկու օրինակով։ Նրանք ունեն կորացող կողեր, ներսի կողմում թեք կտրած շուրթ։ Արտաքին կողմի մակերեսը փայլող է, մասամբ ծածկված է մրի լաքաներով։

Թասերն իրենց զուգահեռներն ունեն Ութարբեկյանի մ. թ. ա. IV դարով թվագրվող դամ-

---

7 Г. М. Асланов, Т. М. Голубкина, Ш. Г. Садыхзаде, Золотые и серебрянные предметы из Азербайджана, Баку. 1960, таб. II, 2, 3.

8 А. О. Мнацаканян, Раскопки могильников у с. Атарбекян в Армянской ССР, КСИИМК, № 60, 1955; А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 8։

9 Նյութերը հրատարակված չեն. Արմավիրի դաշտային մատյան, № 125։

բարանի նյութերի մեջ։ Նույնանման թասեր են հայտնաբերվել Գառնիում 1965 թ., Արմավիրում՝ 1967 թ.։ Հատկանշական է, որ այս վերջինը գտնվել է ուշ հելլենիստական շերտում։ Նմանատիպ թասեր են հայտնաբերվել նաև Կիրովաբադ քաղաքի մոտ բացված աղյուսաշեն դամբարաններից, որոնք թվագրված են մ. թ. ա. I և մ. թ. I դարերով։

Ինչպես տեսնում ենք, Այգեշատի դամբարանադաշտի հելլենիստական ժամանակաշրջանի դամբարաններից գտնված առարկաները զուգահեռներ ունեն մ. թ. ա. IV դարից մինչև մ. թ. I դարը թվագրվող մշակույթի մեջ, որը փաստարկում է այդ առարկաների երկարատև օգտագործումը։ Այս դամբարանների ուսումնասիրությունից երևում է նաև, որ կրոմլեխատիպ կառուցվածք ունեցող քարարկղներում թաղումներ կատարելու սովորությունը, որն այնքան բնորոշ է Հայաստանի նախնադարյան մշակույթին, շարունակվում է նաև մ. թ. ա. I հազարամյակի վերջին քառորդում և նույնիսկ մեր թվարկության առաջին դարերում։

Այսպիսով, Այգեշատի դամբարաններն ու նրանց մեջ գտնված նյութերը թվագրվում են մ. թ. ա. I և մ. թ. I դարերն ընդգրկած ժամանակահատվածով։

Ռ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ֆ. ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

(Մատենագիտություն, 1974)

H. Berberian, Une racine arménienne méconnu: *al*, *Księga pamiatkowa ku czci Eugeniusza Sluzkiewicza*, Warsaw, 1974, p. 39–40.

A. Beylerian, Les origines de la question arménienne: du traité de San Stefano au Congrès de Berlin (1878), *Revue d'histoire diplomatique* (Paris), vol. 87 (1973), p. 139–171.

B. Brentjes, Einige archäologisch-kunsthistorische Beobachtungen anlässlich einer Reise nach den Sowjetrepubliken Georgien und Armenien, *Bibliotheca Orientalis* (Leiden), vol. 31 (1974), p. 52–53.

B. E. Colless, The Traders of the Pearl V, *Abr-Nahrain* (Leiden), vol. 11 (1973–74), p. 1–16.

[Հատկապես § 3–5 (էջ 6–16)։ Հայերը Սիրիայում, Ասանդունում, Ամարապուրայում]։

Я. Р. Дашкевич, З. Трыярски, Армяно-кыпчакское завещание из Львова 1617 г. и современный ему польский перевод, *Rocznik Orientalistyczny* (Warsaw), vol. 36 (1974), p. 119–131.

Я. Р. Дашкевич, Симеон Дпир Лецци—кто он? *Księga pamiatkowa ku czci Eugeniusza Sluzkiewicza*, Warsaw, 1974, p. 65–77.

R. B. Finazzi, Note sulla traduzione armena del V Libro delle Leggi di Platone, *Rendiconti, Istituto Lombardo, Accademia di Scienze e Lettere, Classe di Lettere e Scienze Morali e Storiche* (Milano), vol. 108 (1974), p. 203–222.

A. Garibian, Sur l'évolution du système de morphologie indo-européenne dans l'arménien. Expériment de typologie, *Rendiconti, Istituto Lombardo, Accademia di Scienze e Lettere, Classe di Lettere e Scienze Morali e Storiche* (Milano), vol. 108 (1974), p. 506–510.

J. A. C. Greppin, A Note on Armenian *hariwr*, *Zeitschrift für vergleichende Sprachforschung* (Göttingen), vol. 87 (1973), p. 84–85.

G. Lafontaine, Le sermon „Sur le Dimanche" d'„Eusèbe d'Alexandrie", version arménienne et version géorgienne, *Le Muséon* (Louvain), vol. 87 (1974), p. 23–44.

L. Leloir, Les orientations essentielles de la spiritualité des Peres du désert d'après les „Paterica" arméniens, *Revue de Théologie et de Philosophie*, vol. 1 (1974), p. 30–47.

L. Leloir, Solitude et sollicitude. Le moine loin et près du monde d'après les „Paterica" arméniennes, *Irénikon* (Chevtogne), vol. 47 (1974), p. 307–324.

F. O. Lindeman, Note phonologique sur l'arménien classique *us* „épaule", *Orbis* (Louvain), vol. 23 (1974), p. 355–357.

O. F. A. Meinardus, The Iconography of the Eucharistic Christ in the Armenian churches of New Julfa, *Oriens Christianus* (Wiesbaden), vol. 58 (1974), p. 132–137.

M. Minassian, Place du complément du nom en arménien ancien, *Isr. Oriental Studies*, vol. 4 (1974), p. 265–286.

T. B. Mitford, Some inscriptions from the Cappadocian *Limes*, *Journal of*